

Երգիծաբան բանաստեղծին հետ ընկերանալով, իր տաղաչափութեան աշխոյժը վառեց : Ի՞այց ինչուան ան միջոցին դեռ համբաւը չէր ելած . ուստի ուզելով անուն հանել, 1639 տարւոյն բարեկենդանին Հռովմբ եկաւ և ինքնքը զուարձութեանց ու ծպտելով պըտլութելու տուաւ . քանի մը երգիծաբան իսազեր ալ շարագրեց և առանձին ընկերութեան մը թատրոնին մէջ ձեւացուց, և աս մասիս մէջ իր հանձարաբանութեամբը աւելի համբաւ ստացաւ քան թէ վրձինովը, որով ասոր վրայ իր երկասիրութիւնքն ալ աւելի յարդ ունեցան : 1646ին վերջերը նորէն դէպ՚ի՝ Արքովի Ճամբորդութիւն մը ըրաւ . 1647ին Ո՞ազանիէլի ապստամբութեանը նպաստեց, և երբոր Ապանիացիք յաղթեցին՝ թողուց Հռովմբ փախաւ : Ի՞այց քանի մը տարի անցյնելին ետեւ իր երգիծաբանութիւններէն գրգուուած թշնամիները՝ զինքը ստիպեցին որ Փլորենտիա երթայ, ուր Ո՞ետիշեան Յովհաննէս Լարոլոս կարդինալը իրեն լաւ ընդունելութիւն ըրաւ . հոն ինել մը ատեն կենալին ետեւ, յետին անգամ մըն ալ Հռովմբգնաց իր կենաց վերջին տարիները : Ո՞ալվագոր Ո՞ազային կարիներն ոչ այնչափ յարդ ու անուն ունին իրենց բարեյարմար վայել չութեանն և Ճշգութեանը համար, որչափ գոյներուն կենդանութեանն և առոյցութեանը համար, ինչպէս նաև առարկայից Ճարտար գասաւորութեանը, ձեռքի եզական ազատութեանն, և ինելքէ դուրս ոգելից կենդանութեան կողմանէ նշանաւոր եղած են . կարգէ դուրս արագութեամբ կը նկարէր, և գերազանցեց պատերազմներ, աւազակաց տեսարաններ, ամայի և խոպան տեղեր նկարելու մէջ : Իր նկարուց մէջ նշանաւորներն են . Ի՞աղդին կուրօրէն բարիք բաշխելը, Յովհաննու առ Արքուեացիս քարոզութիւնը, Խնդորի վհկին Ո՞ամուէլի ստուերը կանչելը, Տուքիայի վիշապ ձուկն որսալը (երկու վերջինները Ո՞ովք են), Պիւթագորայ ստուերին իր աշակերտաց երևնալը, և

Կատիլինեայ ստուերին իր դաւակիցն երէն երգումինսղբելը : Ո՞ալվագոր իր պատկերներէն շատը ժանտանրով փորագրած է : Իսկ երգիծաբանութեանցը մէջ նշանաւորներն են, Ի՞աբելոն, Խըրաժշտութիւն, Ի՞աննաստեղծութիւն, Լիկարչութիւն, Պատերազմ և Ի՞ախանձ, որոնց մէջ անմշակ ոճոյն հետ նախատիպ անհարթութիւն մը կը տեսնուի, որ իր նկարուց ոգին կը յիշեցնէ . ունի նաև քանի մը երաժշտական երգեր ու արտադրութիւններ ալ :

### Մեխիգոյ :

Ի՞ազմավիպիս նախընթաց թուոյն մէջ Ո՞իացեալ նահանգաց ընդհանուր հանգամանացը վրայ խօսած ըլլալով, կը մնայ հիմա Լիմերիկայի ուրիշ քանի մը տէրութեանց վրայ ալ խօսքերնիս դարձնել, որոնք Ո՞իացեալ նահանգներէն ետքը նշանաւոր են թէ իրենց ընդարձակութեամբը և թէ իրենց բնակչաց թուոյն բազմութեամբը :

Ուստի նախ և առաջ Ո՞եխիգոյի վրայ գալով՝ կը տեսնենք որ թէպէտ երկրին ընդհանուր տարածութիւնն է 200,000 քառակուսի փարսախ, սակայն համեմատութեամբ բնակիչը սակաւաթիւ է, վասն զի եթէ Լուրոպայի հետ բաղդատելու ըլլանք Ո՞եխիգոյ պէտք էր որ իր այնչափ ընդարձակ տարածութեան մէջ գոնէ 100 կամ 150 միլիոն բնակիչ ունենար, որ է ըսել Լուրոպայի բնակչաց թուոյն կէսը, մինչդեռ հիմայ հազիւ 8,000,000<sup>b</sup> կը հանի . ուր Պաղղիա որ 26,720 քառակուսի փարս . է, 36,205,792 բնակիչ ունի :

Իսկ ընդհանուր Ո՞եխիգոյի երկրին հանգամանացը վրայ խօսելով շատ այնչափ բարեբեր չէ, պատճառաւ որ Ճահիճներ և անքեր ու աւազուտ տեղեր շատ կան : Ամանապէս բազմաթիւ ըշեր ունի, որոնց գլխաւորն է Չաբալա ըսուածը, որ 158 քառակուսի փարսախ է : Ո՞այրաքաղաքին մօտերը շատ մը

Հրաբխային ու բարձրաբերձ լեռներ կան, որոնցմէ ումանք ինչուան 16,000 ոտք բարձրութիւնին, և 1759ին մեծ սասանմունքէ մը վերջը 4,000 ոտք բարձրութեամբ յանկարծակի լեռ մը ձեւացաւ, որուն տեսքը կը հիացընէ զտեսնողները: Ասոնցմէ զատ կան շատ մ'ալ անբեր ու տապախառն հովիտներ, լեռնային ու բլրային տեղեր, և աս պատճառաւ ընդհանրապէս Ո՞եխիգոյի կիման իրեք տեսակ կը բաժնուի, ջերմային, բարեխառն և ցրտին: Գետերուն մէջ նշանաւոր է Ո՞իսխիսիբի, որ գրեթէ ամբողջ երկրին երկայնութեամբը կը տարածուի: Բուսական բերքերուն մէջ անուանիներն են վանիլիա ըսուածը՝ որ նոյն տեղերու սեպհական բոսի բոսի, գագաց և տեսակ տեսակ անտառային ծառեր և բժշկական արմտիք: Խոկ շաքարի եղէզը, բամբակին, որթը, ցորենը, կանեփը, վուշը և ձիթենին շատ լաւ մշակուած են: Հանքերու կողմանէ ալ հարուստ է Ո՞եխիգացւոց երկիրը, և միայն 500 արծաթահանք ունի. թող ոսկիի, արղնձի, անագի կապարի և երկաթի ձոխ հանքերը, որոնք անբաւ քանակութեամբ կ'ելլան ամէն տարի:

Ո՞եխիգոյի բնակչաց թիւը ինչպէս որ վերը ըսինք ընդհանուր հաշուով մը 7էն 8 միլիոն կը կարծուի, խոկ հնդիկ ըսուածները որ բուն Ո՞եխիգոյիք են 4 միլիոն կը համրուին: Ո՞յս հնդիկները մեծաւ մասամբ քրիստոնեայ են, և միայն 300,000 հեթանոս, և սեպհական անուամբ ինտիանոս Պրատոս կը կոչուին, ու սաստիկ թշնամի են սպիտակիներու և որսով կ'ապրին: Տէրութեան կրօնքը հուզմէտական կաթուղիկեայ կրօնքն է ու մէկ արքեպիսկոպոս և տասը եպիսկոպոս ունի, 3,700 քահանայք և կղերիկոսք, և 2,000 կրօնաւորք, որոնց համար 150 մենաստան կայ. և եկեղեցւոյ որ և իցեւ ստացուածքը տէրութեան հարկ տալին ազատ է:

Չեռակերտից, ճարտարութեանց և կրթութեն կողմանէ շատ ետև մնացած է Ո՞եխիգոյի տէրութիւնը ստէպ քա-

ղաքական շփոթութեանց պատճառաւ: Տղոց գաստիարակութիւնը թէպէտ եկեղեցականաց ձեռքը յանձնուած է, բայց կարգի մննալու համար դեռ շատ կարօտութիւն կայ: Կյխաւոր վաճառաշահ քաղաքներն են Ալեքսանդրապոլիս և Երևան: Դամբիգոյ՝ Մտանդեան Ովկիանոսին ափանցը վրայ, և Ո՞գաբուզը Խաղականին վրայ: Երկաթուղիք և հասարակաց Ճամբայ ամենեին չկայ, ուստի վաճառաց տեղափոխութեան համար ջորիներ կը գործածեն:

Ո՞եխիգոյի տէրութիւնը, որ ատենօք Աստիա կը կոչուէր, ինչուան 1821 տարին երեք նահանգ և 12 կուսակալութիւն կը բաժնուէր. խոկ 1823ին հաստատուած նոր սահմանադրութեանը համեմատ 19 նահանգ կը բաժնուի, որոնք իւրաքանչիւր իրենց ներքին կառավարութեանը մէջ ազատ են. միայն հասարակաց բաները դաշնակցութեան ժողովրով կ'ըլլուի, և այս բանիս համար երկու ատեան կայ՝ ծերակուտի և երեսփոխանաց: Ախագահը ըրս տարի միայն կրնայ իր իշխանութիւնը բանեցընել: Յամին 1856 տէրութեն ընդհանուր տարեկան հասնէր 8,500,000 դահեկան Ո՞եխիգոյի, և ծախքը 12,126,239 դահեկան: Յամաքային զօրքը իբր 90,000 ոգի է որոնց կէսը միայն ծառայութեան մէջ են. նաւատարմիղն ալ 19 կտոր նաւ:

Ո՞եխիգոյ և Ո՞եհիգոյ ըստ Ապանիացւոց արտասանութեան, և Ո՞եքսիկոյ ըստ օտարաց, հին ատենը բարգաւած աշխարհք մըն էր, որուն նախնի բնակիցը կը կարծուին թէ Պոլդեքացիք եղած ըլլան Ո՞պառաժուտ ըստած լեռներէն գաղթելով է դարուն միջոցները. ասոնք 400 տարիի չափ երկրին իշխելէն վերջը Չիչէմէզաս բարբարոս ազգէն նուածեցան. սական այս յետինքս ալ 1160ին միջոցները Ո՞յտեկեք կամ Ո՞ստիք ըստած հզօր տոհմէն ընկճուելով ասոնց իշխանութեամնը տակ:

Խամար 1549ին միջոցները Փերնանտոս Պորդէս հուշակաւոր Ապանիացի զօրավարը 508 հետեակ զօր-

քով, 16 հեծելով և 14 հրանօթով՝ ԱՌԵ-  
ԽԻՖՈՍԻ ԱՌԵՐՔ ՅՈՎՀԱՆ ԱՎԱՐՈՒԱ ը-  
սուած եզերքը արշաւելով պատերազ-  
մաւ յաղթեց՝ Դրասքալաց և յաղթա-  
նակաւ ԱՌԵԽԻԳՈ քաղաքը մտաւ և եր-  
կրին իշխանը զԱՌԵՆԴԵՍՈՒՄՆ բանտար-  
գեց : Բայց վերջը երեմն մէկը և եր-  
բեմն մէկալ կողմը յաղթելով՝ վերջա-  
պէս Ապանիացիք զօրացան, և երկրին  
անունը՝ ԱՌԵ Ապանիա կոչելով իրենց  
հարկատու թագաւորութիւն մը ըրին :  
Աակայն ԱՌԵԽԻԳԱՅԻՔ, Ապանիացւոց  
բռնութիւններէն շատ նեղուելով՝ 1821 են  
մեծ խովութիւն մը հանելով ապրա-  
տամբեցան անսնցմէ : Ապանիացիք տես-  
նելով որ բանը գէշի պիտի երթայ, ստի-  
պուեցան այլ և այլ ազատութիւններ  
շնորհելով՝ որով և քիչ մը ատեն երկի-  
րը հանդարտեցաւ : Բայց 1823 են դար-  
ձեալ ապստամբելով բոլորովին ազատ  
մնացին Ապանիացւոց տէրութենէն, և  
ԱՌԻԱԳԵԱԼ նահանգաց օրինակին հե-  
տեւելով՝ իրենք ալ ԱՌԵԽԻԳԱԿԱՆ ը-  
սուած դաշնակցութիւն մը կազմեցին՝  
ամբողջ 19 նահանգով :

**Պրազիլ կամ Կայսրութիւն Պրեզի-  
լայ :**

Այս ընդարձակ կայսրութիւնը ատե-  
նօք Բարդոգացոց կալուածն էր՝ վասն  
զի 1500 միջոցները ԱՄՎԱՐԵՑ Դրապ-  
րալ՝ անուանի Բարդուգէց նաւապետը  
սաստիկ նաւակոծութէ մը ետքը Բար-  
դոց ԱԵԿՈՒՐՈՅ (անքոյթ նաւահանգիստ )  
ըսուած տեղը ինկաւ և տեսնելով երկ-  
րին հարստութիւնն ու ճօխ հանքերը  
չոս հաստատուեցաւ, ու կամաց կամաց  
Բարդոգացիք իրենց սահմանը մեծցը-  
նելով՝ տէր եղան այս ընդարձակ երկ-  
րիս : Աակայն այլ և այլ զրկանաց և  
հարստահարուեց պատճառաւ՝ 1822 են  
ապստամբեցաւ ժողովուրդը իրենց ինք-  
նակալ ձանջնալով զՃԾՆ ԲՆԵԹՈՅ՝ ՅՈՎ-  
ՀԱՆՆԵՍ Զ. Բարդոգաց թագաւորին  
որդին . և նոյն տարուընէ ինչուան հի-  
մա ազատ կայսրութիւն է :

Պրազիլի կայսերութեան ընդհա-  
նուր տարածութիւնը 147,624 քառ .  
աշ . մղոն է, իսկ բնակիցը գրեթէ 8 մի-  
լիոն, որոնք այլ և այլ ցեղեր բաժ-  
նուած են և ասոնց մէջէն գլխաւորնե-  
րը Հնդիկ և Այափչիկ կը կոչուին : Աան  
նաև քրիստոնեայ Հնդիկներ որոնք ընդ-  
հանրապէս երկրագործութեան կը զբա-  
ղին ու տնաքնակ են, անոր համար սեփ-  
հական անուամբ ինքիս Մանուս կը  
կոչուին : Խակ ազատ Հնդիկ ըսուածնե-  
րը խումբ խումբ ձեւացած անտառներու  
և անմատչելի տեղերու մէջ կը բնակին  
որավու ու ձկնորսութեամբ ապրելով :  
Հասարակօրէն փոքրահասակ են և ու-  
ժեղք ու մէջերնին մարդակերներ ալ կը  
գտնուին :

Պրազիլ ձարտարութեան և արուես-  
տից կողմանէ շատ ետև մնացած է,  
միայն վաճառականութիւնը բանուկ է,  
երկրին ազնիւ և հարուստ բերքերը  
դուրս խաւելով ու անոնց փոխարէն  
ձեռակերտներ ընդունելով, և աւելի  
Հնդդիացւոց ու ԱՌԻԱԳԵԱԼ նահանգաց  
հետ կը վաճառակցին :

Այրկիրը թէպէտ և շատ բարեթեր և  
արգաւանդահող է՝ սակայն բնակչացը  
նուազութեանը պատճառաւ լաւ կեր-  
պով մշակուած չըլլալով երեսի վրայ  
մնացած է . գլխաւոր բերքերն են շա-  
քար, խահուկ, գագաոյ, վանիլիա, ծխա-  
խոտ, հրաշեկ փայտ, բամբակ . ասոնց-  
մէ դուրս կան շատ ազնիւ մետաղներ  
ու հանքեր, ինչպէս աղամանդ՝ որ գե-  
տերէ ու կաւային երկիրներէ կ'ելլայ,  
նմանապէս առատ ոսկի, անգին ու պա-  
տուական քարեր, տպագինն, ամեթովս,  
և այլն : Պրազիլին ծովեղերեայ կող-  
մանքը ընդհանրապէս տափարակ են ու  
աւազուտ : Այս սահմաններուս վրայ  
են Պրազիլի համբաւաւոր ու հինա-  
ւորց անտառները՝ որոնց երկնածայրը  
գագաթներն են ստուարաբուն արմատ-  
ները, և անտառային գեղեցիկ և զա-  
նազան հաւոց երամքը, տեսակ տե-  
սակ կենդանիները և գեղեցիկ ու վը-  
սեմ տեսարանները կը հիացընեն ձա-  
նապարհորդները : Հնտառներուն ըլք-